

նուն : — Չինք և Նաբոնները մեծ վաճառականութիւն կ'ընեն այս երկրիս հետ :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պելձիոյ երկրագործութիւնը, ձարտարութիւնն ու վաճառականութիւնը :

Պելձիոյ պետութիւնը, որ 8,580 քառակուսի մղոն տարածութիւն ունի, և 4,548,507 բնակիչ, շատ յառաջադէմ է այսօրուան օրս երկրագործութեան, ձարտարութեան ու վաճառականութեան մէջ : Երկրագործութեան գործունէութեամբը երկրագործութիւնը զարգացած է . 'ի բաց առեալ այգեկութեան, ամէն տեսակ ցորենական արմրտեաց և ընդեղինաց, կանեփի, կտաւի հունձքն առատ է . նոյնպէս իւղալից և ներկաբեր տունկերու, պտղոց, հողմի և ծխախոտի . և պարտիզպանութեան մէջ ալ հոլանտայի կը հասնի : Պախրէ, մեզու և շերամ կը սնուցանեն երկրին բոլոր ընդարձակութեանը մէջ . իւքսեմպուրկի ձիերը, անվերսական Վամբին ըսուած երկրին խաշինքն և Ղուտէն լեռանց խոզերը անուանի են : Իսկ ձկնորսութեան համար 200 նաւ ու նաւակ կը բանին անդադար ամէն տարի : Երկրագործութիւնը է, բայց անոր տեղը կիզահողմ<sup>1</sup> և քարածուխը<sup>2</sup> կը ծառայեցնեն : Պելձիա հարուստ է հանքերով : Կամուր, Իիէժ, Իիքսեմպուրկ և հենոյ գաւառներուն մէջ կապարի, պղնձի և երկաթի հանքեր կան . քարածուխի անուանի հանքեր 'ի հիւյ, Իիէժ, Կամուր, Շարլուուա և Սոնս . արդարաւ Քարի հանքեր Ղուտէն լեռանց մէջ . պորփուրի և մարմարիսնի հանքեր Պրապանդ և հենոյ գաւառաց մէջ . արուրաքար, պաղլեղ, արջասպ, կիր, շէնքի քարեր, երկանի քարահատք, ծխախոտի վառա-

1 Գ. շ. Tourbe. 2 Գ. շ. Houille.

րանի և յախճապակի հող, և այլն . 'ի Սթա ալ հանքային ջրեր :

Որչափ որ բնութեան հարստութիւններովը ճոխացած է այս երկիրս, այնչափ մարդկային ձարտարութիւնն ալ զարմանալի աշխուժութեամբ իր օգտին ծառայեցուցած է զանոնք : Այս մշակութիւնը, որ 41,000 հեկտար տեղ բռնած է, ամէն տարի 18 միլիոն հազարակրամ կու տայ, որոնցմէ 5 միլիոն Վաղղիա, Լնգղիա և հոլանտա կ'երթայ՝ 30 միլիոն Ֆրանցի ատէքով : Վուրդրէ, Պրիւժ, Կանդ, Պրիւքսէլ, Սալին, Լնվերսա և Վուրնէ քաղաքները կեդրոն են կտաւի գործարաններուն, որոնց մէջ 400,000 գործաւոր կ'աշխատին, և որոնցմէ ելած տարեկան 900,000 ծրարին<sup>1</sup> բերած շահը 100 միլիոն Ֆրանգը կ'անցնի : Պրիւժի Գալիսիանիւն ու Գալիսիանիւն, Պրիւքսէլի և Սալինի Գալիսիանիւն բոլոր Լուրոպայի մէջ հռչակաւոր են : Չուանամանութիւնն ու առագաստի պաստաններն Լնվերսայի, Վերմոնտի և հենոյ գաւառին գլխաւոր ձարտարութիւններէն մէկն է : Բամբակի ձեռագործին ամենէն մեծ գործարաններն են 'ի Կանդ, Լըբերէն, Պրիւժ, Վուրդրէ, Սալին, Լուվէն, Լնտերլազգ, Վուրնէ, Սոնս և Սալին . Կանդ քաղաքը միայն 80,000 հազարակրամ բամբակի կտաւ վաճառքի կը հանէ ամէն շաբաթ . արեւմտեան Ֆլանտրան տարին 80,000 ծրար կը պատրաստէ . բոլոր Պելձիոյ մէջ գրեթէ 400,000 հիւսելու ասեղ, և 23,500 ոստայնի գործի կը բանին, զորոնք կը շարժեն 80 շոգեշարժ գործիքներ . և միայն այս ձարտարութեանս 170,000 գործաւոր կը զբաղին : Ալէրիէրի, Իիէժի, Իիւպուրկի և Իւբրի չուխայի գործարանները, հոտիմոնի, Սալվերլի և Վիլլիմոնի Քլանէլի, այծէի, և այլ և այլ կերպաններու գործարանները 40,000 գործաւոր ունին . Ալէրիէր քաղաքն ամէն տարի 110,000 չուխայի ծրար կը

1 Տճ . Թոթ :

հանէ : Վլխարկի գործարաններուն մէջ 50,000 գործաւոր կը բանին . 'ի Պրիւքսէլ և 'ի Ղուրնէ գորգի գործարաններ կան . յ'նչվերսա և 'ի | իէռալ մետաքսի գործարաններ : Կաշեգործութեան ու ձեռնոցներու կ'աշխատին 'ի | իմպուրկ գաւառն , 'ի | իէժ , Սղա վըլայ , Կամուր , Տինան , Պրիւժ և 'ի Կանդ : Կան նաև կառագործութեան արուեստանոցներ 'ի Պրիւքսէլ . շաքարի զտարաններ յ'նչվերսա , Պրիւժ , ( )սդանտ , Կանդ , Սոնս և 'ի | ու վէն . Թղթի գործարաններ 'ի Կամուր , | իէժ և Ս'աշին . պատու հանաց ապակոյ և շիշերու գործարաններ 'ի Շարլըուա . հայլի գործարան յ'Լաննի . յախճապակոյ արուեստանոցներ 'ի Պրիւքսէլ , Ղուրնէ , Սոնս և 'ի Կանդ . գարեջրոյ գործարաններ , զտարաններ , բազմաթիւ տպարաններ , և այլն :

Պելճիոյ քարածուխի հանքերն Լըրուպայի մէջ ամենէն նշանաւորներն են : Վրեթէ 400 փոս կայ ածխոյ . Սոնսի , Սարիմնի , | իէժի և Շարլըուայի շրջակայիցմէ տարին 3,200,000 տակառաչափ ածուխ կ'ելլայ , որ բոլոր Վաղղիոյ հողէն ելածին հաւասար է , և 50 միլիոն ֆրանքի արժէք ունի : Երկաթին տարեկան բերքն է գրեթէ 355,000 տակառաչափ . 120 բարձր ըսուած փուռեր միշտ կը բանին : Հասարակ ձուլածոյքը կը շինուին 'ի | իէժ և 'ի Սալին , մեքենայք 'ի Կանդ , Պրիւքսէլ , | իէժ , Ս'երվիէր , Շարլըուա , Սըրէն , Պուսսիւ , և 'ի Վիլլըմոն . զէնքերն 'ի | իէժ . դանակները 'ի Կամուր գաւառին մէջ . Թանագն 'ի | իէժ և 'ի Հիւլ . վիրաբուժութեան գործիչներն 'ի | իէժ և 'ի Պրիւքսէլ . զինկէ գործածներն 'ի | իէժ . կապարէ խողովակներն 'ի Կանդ . ասեղներն 'ի Սէն-Լիգուա . գամերը , երկաթէ թիւթեղներն ու գլանները 'ի | իէժ և Հէնոյ գաւառին մէջ : | իէժի մօտ Լ'նկլէօրի գործատունը Լ'ըղէնպէրկի հանքերէն ելած զինկը կը գործէ :

Վերքին վաճառականութիւնը արտաքոյ կարգի բանուկ է այլ և այլ կերպ հաղորդակցութեանց բազմութեանը պատճառաւ : Ս'եժ ձամբաներուն երկայնութիւնն է 4,927 հազարամէդր , գետերուն բնական նաւարկութեանը՝ 941 հազարամէդր . իսկ ջրանցքներունը 553 հազարամէդր , որոնցմէ գլխաւորներն են՝ Հիւսիսային ջրանցքն ընդ մէջ Լ'նչվերսայի և Ս'անլուի , | իէժի ջրանցքն որ Ս'էօզ գետը կը միացնէ Ս'ոզէլ գետին հետ , Շարլըուայի 'ի Պրիւքսէլ , Վէրնէօզի ջրանցքն որ կը միացնէ զԿանդ արեւմտեան Լսգոյի հետ , ( )սդանտի 'ի Պրիւժ և 'ի Կանդ , Պրիւքսէլն ու Լուվէնը Ս'իւբէլի հետ միաւորող ջրանցքը , և Սոնսի ջրանցքն 'ի Վոնտէ : Ս'ալին քաղաքը կեդրոն է շոգեկառաց երկաթաշաւիղներու , որոնց ամբողջական երկայնութիւնն է 1,209 հազարամէդր , որով երկրին գրեթէ ամէն կողմերն իրարու հետ կապուած են : Լըբօրա հեռագիրը 1851 տարիէն 'ի վեր կը գործածուի Պելճիոյ մէջ :

Երտաքին վաճառականութիւն 1835էն մինչև 1839՝ 387 միլիոն ֆրանքի հասեր է . 1840-1844 , 500 միլիոնի . 1845-1849 , 718 միլիոնի . 1850ն , 912 միլիոնի . 1854ն , 1,335,400,000 ֆրանքի . բայց աս ալ ծանուցանելու է միանգամայն՝ որ այս գումարին գրեթէ կէսը վաճառքներուն անցաբոցը կը տրուի : Պելճիա օտարներէն կ'առնէ բամբակ , բուրդ , կաշի , լեղակ , ներկի փայտ , գինի , և այլն . և դուրս կը խըրկէ երկաթ , ձուլածոյ վաճառք , մեքենայք , զինկ , հայլի և ապակեղէն , կրտաւ և կտաւի թել , կերպասներ , գիրք , և այլն : 1856 տարւոյն Պելճիա 148 վաճառականութեան նաւ ունէր , ամէնը մէկուեղ 42,746 տակառաչափի :

